Հայտարարություն

«ՀՀ Լոռու մարզի Ձորագետի հիմնական դպրոց», «ՀՀ Լոռու մարզի Ձորագյուղի հիմնական դպրոց», «ՀՀ Լոռու մարզի Վահագնաձորի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ների միացյալ կառավարման խորհուրդը հայտարարում է բաց մրցույթ «ՀՀ Լոռու մարզի Վահագնաձորի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնի համար:

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1.ՀՀ քաղաքացիությունը,
2.<<Հանրակրթության մասին>> օրենքի 12-րդ 17-րդ մասով սահմանված հիմքերի բացակայությունը:

Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են՝

1.դիմում՝ հաստատության կառավարման խորհրդի նախագահի անունով,
2.ՀՀ քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը (բնօրինակի հետ),
3.հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) պատճենը (բնօրինակի հետ),
4.տվյալ հաստատության զարգացման ծրագիրը (որը հավակնորդը կարող է ներկայացնել մինչև գործերի ընդունման ժամկետի ավարտը, այդ թվում՝ էլեկտրոնային տարբերակով), որը խորհրդի որոշմամբ լիազորված խորհրդի անդամը հավակնորդի կողմից տրամադրելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է հրապարակման տվյալ դպրոցի պաշտոնական կայքում, ինչպես նաև տրամադրում է խորհրդի մյուս անդամներին,
5.ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:
Փաստաթղթերն ընդունվում են 2021թ.-ի սեպտեմբերի 22-ից մինչև հոկտեմբերի 11-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը $9^{\underline{00}}$ -ից $15^{\underline{00}}$ -ը, բացի շաբաթ, կիրակի և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից, Վահագնաձորի հիմնական դպրոցում:

Մրցույթը տեղի կունենա 2021թ.-ի հոկտեմբերի 25-ին՝ ժամը $15^{\underline{00}}$ -ին ՀՀ Լոռու մարզի Վահագնաձորի հիմնական դպրոցում, հասցեն՝ գ. Վահագնաձոր, 3-րդ փ., 1-ին փակուղի, 14շ.:

Տեղեկությունների համար զանգահարել 093-34-07-25 հեռախոսահամարով, էլ.փոստ՝ vahagnadzor@schools.am: